ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

15 հուլիսի 2024 թվականի թիվ 76-Ա

ք. Երևան

«ՀԻԲՐԻԴ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 54-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «ՀԻԲՐԻԴ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ» ՍՊ ընկերության 2024 թվականի հունիսի 26-ի տեսալսողական ծրագրերի վերաբերյալ ծանուցումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց՝***

1. Հաստատել «ՀԻԲՐԻԴ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ» ՍՊ ընկերության տեսալսողական ծրագրերի վերաբերյալ ծանուցումը՝ համաձայն Հավելվածի, արձանագրելով, որ պայմանագրի կողմ հանդիսացող «ՎԻ ԲՐՈԴԿԱՍՏԻՆԳ» ՍՊ ընկերության՝ Հավելվածում նշված ծրագրերի նկատմամբ օրինական իրավատեր լինելու իրավական հիմքերի մասով մնում են հարցեր, ինչը, սակայն, ծանուցումը չհաստատելու հիմք չէ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՀԻԲՐԻԴ ՓՐՈԴԱՔՇՆ ԷՆԴ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ» ՍՊ ընկերությանը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2024թ. հուլիսի 15
ք. Երևան

Հավելված
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի
2024 թվականի հուլիսի 15-ի թիվ 76-Ա որոշման

Տեսալսողական ծրագրի անվանումը	**Ժամկետը**
«ТВ 1000-Экшн» (логотип viju TV1000 Action) «ТВ 1000. Русское Кино» (логотип viju ТВ 1000 Русское) «ТВ 1000» (TV 1000) (логотип viju TV1000) «Виасат Эксплорер» (Viasat Explorer) (логотип viju Explore) «Виасат Хистори» (Viasat History) (логотип viju History) «Виасат Нэйчер» (логотип viju Nature) «Спортивный телеканал Виасат» (логотип viju Sport) «Телеканал Да Винчи» «TV 1000 Premium» (логотип viju+ Premiere) «TV 1000 Megahit» (логотип viju+ Megahit) «TV 1000 Comedy» (логотип viju+ Comedy) «Виасат Нэйчер/Хистори HD» (логотип viju+ Planet) «ViP SERIAL» (логотип viju+ Serial)	պայմանագրի գործողության ժամկետով